Հայտարարություն

«Երևանի հ4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողների հետևյալ թափուր աշխատատեղերի համար.

1.«Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ՝ 1 դրույքաչափ

2.«Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ՝ 1 դրույքաչափ

Կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

Մասնագիտական մոդուլների ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:
2) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:
3) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում
2. Կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ դիպլոմ (բնօրինակ և պատճեն)
3. Անձնագիր (բնօրինակ և պատճեն)
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն)
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. մարտի 26-ից մինչև ապրիլի 8-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Մեր հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքևխյան 20, հեռախոս 63-40-70, էլփոստի հասցեն՝ 4usumnaran@mail.ru :

Մրցույթը կկայանա 2026թ. ապրիլի 13-ին ժամը 13.00-ին «Երևանի հ4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում: